

**ԶԻՆՏԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԿՅԱՆՔԻՆ ԿԱՄ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆԸ ՊԱՏՃԱՌՎԱԾ
ՎՆԱՍՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԵՎ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

ՈՐՈՇՈՒՄ

«05» հոկտեմբերի 2018թ. թիվ 25

ՀԱՏՈՒՑՄԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) 4-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «դ» ենթակետը, 2-րդ մասի 2-րդ կետը, 5-րդ հոդվածի 2-րդ մասը, Զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի 02.03.2017թ. թիվ 5 որոշմամբ հաստատված Ակտիվների և պարտավորությունների կառավարման հանձնաժողովի կազմման և գործունեության կարգի 10.3-րդ կետը, Զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի 02.03.2017թ. թիվ 9 որոշմամբ հաստատված Հատուցման գումարների վճարման կարգը, Ակտիվների և պարտավորությունների կառավարման հանձնաժողովի 05.10.2018թ. նիստի թիվ 9 արձանագրությունը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությունից 02.10.2018թ. ստացված փաստաթղթերը և Արագածոտնի մարզի ԲՍՓՀ 22.08.2018թ. բժշկասոցիալական փորձաքննական թիվ 1311296 որոշումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Երկրորդ խմբի հաշմանդամ լեյտենանտ Երվանդ Նորիկի Խաչատրյանին վճարել Օրենքով սահմանված հատուցման գումարը՝ 53.000.000 ՀՀ դրամը, որից 5.000.000 ՀՀ դրամը միանվագ, իսկ մնացած գումարը՝ ամսական 200.000 ՀՀ դրամի չափով 20 տարվա ընթացքում:
2. Սահմանել, որ Երվանդ Նորիկի Խաչատրյանին սույն որոշման 1-ին կետում նշված ամսական վճարումների կատարումը սկսել 2018 թվականի օգոստոս ամսվանից և սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 3-օրյա ժամկետում վերջինիս փոխանցել 2018 թվականի օգոստոս և սեպտեմբեր ամիսների համար սահմանված վճարները՝ ընդհանուր 400.000 ՀՀ դրամ գումարի չափով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Հանձնաժողովի նախագահ՝



Վարուժան Ավետիքյան